թողոյր միայն վասն ամօթոյն զվարտիսն և զգտակն իւր վեղարաւն, որպէսզի տեսողացն յայտնի լիցի թէ ա՛յն է ի կախաղանին։ Եւ օրս էր Ծաղկազարդ եւ գալուստ Տեառն մերոյ Քրիստոսի։

Բշխ (23 Մարտ). և աւուրքս որոնէին և զմեծամեծս Հռոմոց եւ զպատրիգն եւս Երուսաղէմայ, զի փախան յորմէ այս գործեցաւ, վասն զի համախոհիւք են արարեալ զբանս։ Եւ օր Բշխ, քանզի Գ օր եղև ի կախաղանին, հրաման տայ վէզիրն սաստկաբար զի զպատրիարգի մարմինն առցեն ի վայր և յազգաց նոքին ոչ ոք մի մօտեսցի[1]) անդ կամ երևեսցի, այլ չորպաճին այնմ սահմանին տայ առնել զնա ի վայր, եւ եդին ի վերայ համալի եւ տարեալ ի Ղումղափուն, արկեալ ի ծովն և չուան կապեալ ի վարտիցէն քաշէին զնա նաւավարքն[2]) մինչև ի մէջս ծովուն, և քար կապեալ ի պարանոցն ընկղմեցին ի խորս ծովուն։ Եւ աւուրքս վէզիրն յամենայն տեղիս մարդ եդ զի զփախուցեալ Հռոմքն գտցէ, և զոմանս որ եգիտ՝ եդ ի բանտս մահապարտաց, և զոմանս եգիտ ի ծառայից փախուցելոցն և անդ եդ. և մունետիկ ձայնեալ ի մէջ շուկայիցն եթէ Հայ եղողքն զփակեղս իւրեանց խատ կապեսցեն որպէս և են, և Հռոմքն՝ կապուտ։ Եւ էին Հռոմք յահ և ի դողումն ամենայն ազգաւն իւրեանց՝ սոսկացեալ, կարծեցեալ գուցէ զամենայն ազգս ի սուր մաշեսցեն, և ոչ ելանէին յերեսս մարդոյ, և ինչանաւոր արանց նոցա խափանեալ էին ի տունս իւրեանց և ոչ գիտէին զելս իրացն իմանալ՝ թէ զի՛նչ լինիցի. և ի բերանս ամենեցուն այս էր խօսք՝ եթէ ի Զատկէ Կիրակիս զբանտարգեալ Հռոմոն կախելոց են, զի յոյժ աղճատեցաւ անունն և տարածեցաւ ի տէրութիւնս և յիշխանութիւնս Տաճկաց և յամենայն թա-

1) մօտեսցէ. 2) նաւարարքն.